

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

4.14	Կրթություն.....	4.14.2
4.14.1	Ենթակառուցվածք .....	4.14.2
4.14.2	Դպրոց ընդունվելու ընթացակարգը .....	4.14.7

## ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

Աղյուսակ 4.14.1	Ուսումնասիրվող տարածքում կրթական ենթակառուցվածքը .....	4.14.2
Աղյուսակ 4.14.2	Դպրոցի տարողունակությունը և հաճախելիությունը (2015թ.) .....	4.14.3
Աղյուսակ 4.14.3	Կրթական հաստատություններ .....	4.14.5

## ՆԿԱՐՆԵՐ

Նկ. 4.14.1	Գորայքի մանկական կենտրոն.....	4.14.4
Նկ. 4.14.2	Ջերմուկի մանկապարտեզ .....	4.14.4

#### 4.14 Կրթություն

Հայաստանյան պետական բյուջեից ֆինանսավորվող կրթական հաստատությունները ներառում են՝

- Նախադպրոցական կրթություն 3-6 տարեկան երեխաների համար
- Ընդհանուր միջնակարգ կրթություն, որը ներառում է տարրական դպրոցը (1-3-րդ դասարաններ) և հիմնական դպրոցը (4-9-րդ դասարաններ);
- Ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ);
- Մասնագիտացված և բարձրագույն կրթական հաստատություններ, և
- Ուսուցիչների վերապատրաստման և մասնագետների վերապատրաստման հաստատություններ :

Հիմնական և ավագ դպրոցի շրջանավարտները կարող են ուսումը շարունակել մասնագիտացված կամ բարձրագույն կրթական հաստատություններում:

Կան նաև մի շարք ոչ պետական ուսումնական հաստատություններ՝ դպրոցներ, քոլեջներ և համալսարաններ, որոնք վճարովի հիմունքներով ծառայություններ են մատուցում: Հայաստանում գրագիտությունը կազմում է գրեթե 100%:

Երրորդային կրթական հաստատություններ ուսումնասիրվող տարածքում չկան: Ամենատարածված տարբերակներն են Վայք, Սիսիան, Կապան, Եղեգնաձոր և Երևան քաղաքները, որոնց ընտրությունը տարբեր համայնքներում տարբեր է:

##### 4.14.1 Ենթակառուցվածք

Ինչպես երևում է Աղյուսակ 4.14.1 և Աղյուսակ 4.14.2-ում, ուսումնասիրվող տարածքը համեմատաբար հարուստ է կրթական հաստատություններով, որտեղ գերիշխող թեման գեր-կարողություններն են այլ ոչ թե հակառակը:

<b>Աղյուսակ 4.14.1 Ուսումնասիրվող տարածքում կրթական ենթակառուցվածքը</b>			
<b>Համայնք</b>	<b>Մանկապարտեզ</b>	<b>Տարրական և միջնակարգ դպրոց</b>	<b>Ավագ դպրոց</b>
Գորայք	1 (20-25 երեխա)	1	1 (միջնակարգ դպրոցի մի մասը)
Գնդեվազ	1 (20 երեխա)	1	1 (միջնակարգ դպրոցի մի մասը)
Սարավան	0	1	0
Ջերմուկ	1 (30 երեխա)	2	1

<b>Աղյուսակ 4.14.1 Ուսումնասիրվող տարածքում կրթական ենթակառուցվածքը</b>			
<b>Համայնք</b>	<b>Մանկապարտեզ</b>	<b>Տարրական և միջնակարգ դպրոց</b>	<b>Ավագ դպրոց</b>
Կեչուտ	1 (20 -25 երեխա)	1	0
<b>Ընդամենը</b>	<b>4</b>	<b>6</b>	<b>3</b>

<b>Աղյուսակ 4.14.2 Դպրոցի տարողունակությունը և հաճախելիությունը (2015թ.)</b>				
<b>Դպրոց</b>	<b>Առավելագույն տարողունակությունը</b>	<b>Ներկայիս հաճախելիությունը (2014թ.)</b>	<b>Հաճախման հարաբերությունը</b>	<b>Իգական սեռի աշակերտների համամասնությունը</b>
Գորայք՝ միջնակարգ և ավագ դպրոց	240	76	32%	43%
Սարավան՝ միջնակարգ դպրոց	100	26	26%	38%
Գնդեվազ՝ Միջնակարգ և ավագ դպրոց	360	85	24%	47%
Ջերմուկի թիվ 1 միջնակարգ դպրոց	300	295	98%	51%
Ջերմուկի թիվ 2 ավագ դպրոց	1100	402	37%	51%
Կեչուտի միջնակարգ դպրոց	420	153 (2012թ. տվյալներ)	36%	42%

**Մանկապարտեզ**

Գորայքում գործում է մանկական կետրոն, որը տեղակայված է գյուղի դպրոցում: Վերջինս ֆինանսական աջակցություն է ստացել Ուորլդ Վիժն հասարակական կազմակերպության և Լիդիան ընկերության կողմից: Գորայքում գրեթե բոլոր խնամքի կարիք ունեցող տարիքային խմբերի երեխաները հաճախում են մանկական կետրոն (տես Նկ. 4.14.1), որը սակայն դեռևս պաշտոնապես հավատարմագրված չէ, այդ իսկ պատճառով պետական ֆինանսավորում չի ստանում: Գնդեվազում գործում է Լիդիանի կողմից վերանորոգված մանկապարտեզ, որի վերանորոգումն ավարտվել է 2011թ.-ին: Սարավանում նախադպրոցական հաստատություններ չկան:



**Նկ. 4.14.1 Գորայքի մանկական կենտրոն**

Ջերմուկի մանկապարտեզը գտնվում է բարվոք վիճակում և զինված է բավարար քանակությամբ հարմարություններով, այդ թվում՝ խաղահրապարակ, մարզասրահ, երաժշտության սենյակ և առաջին օգնության կենտրոն, որոնք համալրված են խաղալիքներով և այլ անհրաժեշտ պարագաներով (տես Նկ. 4.14.2): Մանկապարտեզում տրվում է օրական երեք անգամյա սնունդ, այն ունի գործող սանհանգույց, ինչպես նաև կենտրոնացված ջեռուցման համակարգ, որը միացվում է ձմռանը:



**Նկ. 4.14.2. Ջերմուկի մանկապարտեզ**

Կեչուտի մանկապարտեզը ևս գտնվում է բարվոք վիճակում և բացի երաժշտական սենյակից, խաղահրապարակից և մարզասրահից ունի բոլոր անհրաժեշտ հարմարությունները:

Եվ Ջերմուկում և Կեչուտում մանկապարտեզները վճարովի են (ամսական գանձվող գումարը 2010թ-ին համապատասխանաբար կազմել է 10 000 ՀՀ դրամ (24 ԱՄՆ դոլլար) և 7 000 ՀՀ դրամ (17 ԱՄՆ դոլլար)): Երկու համայնքներում էլ բարձրացվել է այս ծառայությունների մատչելիության հարցը:

**Տարրական և միջնակարգ դպրոց**

Ուսումնասիրվող տարածքի գյուղական համայնքներից յուրաքանչյուրում առկա է մեկական դպրոց: Դպրոցի նախնական մակարդակը միջնակարգն է, իսկ ավարտականը՝ ավագը: Ջերմուկ համայնքն ունի երեք դպրոց, որոնցից մեկը տեղակայված է Կեչուտում: Աղյուսակ 4.14.3-ում ներկայացված են նշված համայնքների կրթական հաստատությունները:

Աղյուսակ 4.14.3 Կրթական հաստատություններ		
Գյուղ/քաղաք	Հաստատություն	Կարգավիճակը
Գորայք	Մեկ դպրոց՝ միջնակարգ և ավագ	Գազով աշխատող կենտրոնացված ջեռուցում, գործող զուգարաններ, մարզադահլիճ և դպրոցի գրադարան: Համակարգչային սենյակ անվճար ինտերնետով, տեղացի գործարարի հովանավորչությամբ գործող դպրոցի բուֆետ: Ըստ տվյալների՝ աշակերտների 95% հանձնել է ավարտական քննությունները:
Սարավան	Միայն միջնակարգ դպրոց	Համեմատաբար ոչ բարվոք վիճակ: Դպրոցը ներսում չունի զուգարան, մարզադահլիճ կամ որևէ գիտական լաբորատորիա: Ըստ տվյալների՝ աշակերտների 95% հանձնել է ավարտական քննությունները:
Գնդեվագ	Մեկ դպրոց՝ միջնակարգ և ավագ	Բարվոք վիճակ՝ ներսի զուգարաններով և գազով աշխատող կենտրոնացված ջեռուցմամբ: Չկա ճաշարան, առկա են համակարգչային սենյակ և գրադարան, որոնք չունեն բավարար ռեսուրսներ: Ըստ տվյալների՝ աշակերտների 99% հանձնել է ավարտական քննությունները:
Ջերմուկ	Թիվ 1 դպրոց	Միջնակարգ դպրոցը բարվոք վիճակում է, կա կենտրոնացված ջեռուցման համակարգ, առկա են պահանջները բավարարող դասարաններ, համակարգչային սենյակ ինտերնետով և գրադարան: Գարնանը ստորերկրյա ջրերի բարձր մակարդակից դպրոցի մասնաշենքերը վնասվում են:
Ջերմուկ	Թիվ 2 դպրոց	Ավագ դպրոցը գերազանց վիճակում է (վերանորոգվել է 2008թ.): Գազով աշխատող կենտրոնացված ջեռուցման համակարգ, պահանջներին համապատասխանող զուգարաններ, համակարգչային սենյակ ինտերնետով և հարուստ գրադարան
Կեչուտ	Միջնակարգ դպրոց	Այս դպրոցի շրջանավարտները կրթությունը շարունակելու համար հաճախում են Ջերմուկի ավագ դպրոց:

Գորայքի աշակերտներն ավելի շատ հակված են բարձրագույն կրթությունը ստանալ Միսիանում կամ Կապան քաղաքներում, քան Երևանում: Այնուամենայնիվ,

հարցազրույցների արդյունքում պարզվել է, որ հասանելի ավագ դպրոցի բացակայությունը Մարավանում ազդում է ուսանողների խանդավառության վրա և իջեցնում է նրանց նպատակաուղղվածության մակարդակը: Այս տարածքներում ավագ դպրոց գնում են միայն այն աշակերտները, ովքեր բարեկամներ ունեն Վայքում, Եղեգնաձորում կամ այլուր:

Գնդեվազի դպրոցի շրջանավարտների մոտավորապես կեսը բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվում է կամ Երևանում կամ Եղեգնաձորում:

Ջերմուկի դպրոցի շրջանավարտների մոտ կեսը բարձրագույն կրթությունը շարունակում է հիմնականում ընտրելով Երևանում: Որոշ աշակերտներ կրթությունը շարունակում են Եղեգնաձորում, իսկ ոմանք էլ ֆինանսապես վիճակից ելնելով, չեն կարողանում բարձրագույն կրթություն ստանալ:

Կեչուտում ներկայումս ունի մեկ միջնակարգ դպրոց, որի շրջանավարտները ավագ դպրոց գնալու նպատակով տեղափոխվում են Ջերմուկ: Սա լուրջ խնդիր է հանդիսանում ծնողների համար, ովքեր ցանկանում են, որ Կեչուտի դպրոցը վերակազմավորվի՝ տալով և միջնակարգ և ավագ դպրոցների կրթական մակարդակները:

### ***Մասնագիտացված դպրոցներ***

Ջերմուկը նույնպես ունի երկու արվեստի դպրոց, մարզադպրոց և շախմատի դպրոց: Արվեստի դպրոցները ֆինանսավորվում են պետության կողմից և ներառում են երաժշտության, պարի և նկարչության, ինչպես նաև քանդակագործության խմբակներ: Դպրոցները ընդունում են երեխաներին 6 տարեկանից սկսած: Ջերմուկի արվեստի դպրոցի սաները մրցույթներում գրանցել են զգալի հաջողություններ:

Մարզադպրոցը, որն իր գոյությունը պահպանում է տեղացի մոլի երկրպագուների շնորհիվ, ուսուցանում է բռնցքամարտ և ըմբշամարտ: Տեղեկատվության համաձայն մարզադպրոցը մարզագույքով քիչ հազեցած է և չի ստանում պետության աջակցությունը:

Շախմատի դպրոցը ֆինանսավորվում և աջակցություն է ստանում Ջերմուկի համայնքի կողմից և ըստ տեղեկությունների այն գտնվում է լավ վիճակում և աշխատում է անվճար հիմունքներով: Սաները հաղթել են բազմաթիվ տեղական մրցույթներում և նպատակադրված են հասնել ավելի զգալի հաջողությունների:

Գորայքի դպրոցը նույնպես աջակցություն է ցուցաբերում արտադպրոցական միջոցառումներին, օրինակ՝ շախմատի ակումբին, սպորտի և երաժշտության դասերին:

#### ***4.14.2 Դպրոց ընդունվելու ընթացակարգը***

Ուսումնասիրվող տարածքում կրթական ենթակառուցվածքների մակարդակն ավելի բարձր է, քան ուսուցման մակարդակներից շատերի պահանջարկը: Միակ բացառությունը, որն ըստ երևույթին ուշադրության կարիք ունի, ավագ դպրոցների հասանելությունն է: Ջերմուկում և Կեչուտում ավագ դպրոցում կա տեղերի պակաս, իսկ Սարավանում ավագ դպրոցի տարբերակն իսպառ բացակայում է:

Սեզոնային հովիվների երեխաները սովորաբար դպրոց են ընդունվում իրենց ծննդյան վայրում ու բաց են թողնում ամենամյա դպրոցի ուսումնական ծրագրի որոշ մասը (ապրիլ և հոկտեմբեր)՝ ընտանիքի հաճախակի մի տեղից մյուսը տեղափոխվելու պատճառով:

Տարածաշրջանում համալսարանի և այլ բարձրագույն ուսումնական հաստատությունների բացակայությունը ևս կարող է խոչընդոտ հանդիսանալ ավագ դպրոցական մակարդակում կրթության ստացման համար՝ նպատակասլացության և կարիերայի պլանավորման առումով: Տարածաշրջանում մասնագիտական հնարավորությունների պակասի առկայությունը հավանաբար նույնպես ազդել է դպրոցի աշակերտների բարոյական վիճակի վրա: